լում, ստանում են 10—15 ու: Նա պանդոկ է
գնում, ավում է աչն, ողի, զինի, գարեջուր է
բերում և դրա համար փող ստանում, ոգնում

ծնողներին, հարկավ, դպրոցում հա չի կարող ինչպես հարկն է, սովորել ու տանը դասերը պատրաստել։ Անպայման պիտի երական կադետ-կերպուժան պարտականությունն է՝ ճանաչել աղպիսի ընկերոջը և համապատասխան կազմակերպությունների միջոցով կամ անմիջականորեն նրան ոգնություն ցույց տալ։

Մի որինակ ել, Գրեպրոպետրովսկից։ Այնտեղ կան յերեխաներ վորոնց կոչում են «ը կրաբնիկներ»։ Ահա ինչ է նշանակում այդ։ Այնտեղ կան, չեթե կարելի յե այսպես արտահայտվել, գործածված անպետք իրերի կույտեր, վորտեղ գտնվում են գլխավորապես յերկաթի, կոկսի և այլն մնացորդներ։ Ահա շատ մեծ քանակությամբ յերեխաներ դասից հետո, չեթե նըրանք սովորում են առաջին փոխին, համարյա ամբողջ որն աչնտեղ են, հավաքում են այդ թափթփուկները, վորը կամ ծնողներն են ծախում, կամ հենց իրենք և աղպիսով նրանք ամբողջ որը կտրված են ուսումից։

Յեա ուզում եմ խոսել այն մասին, թե արդյոք մեզ սոսա պիտի երները խմում են, թե՞ վոչ։ Ինչ են ասում հետազոտության նշութերը, վոր վերաբերում են պիտիներների ալկոհոլ գործածելու դեպքերին։ Մենք տեսնում ենք, վոր ընտանիքում, յերբ հյուրեր են գալիս կամ հարսանիք է

լինում, ծնողները պիտիներներին թույլ են տալիս խմել։ Յերբ յերեխաները խմում են և հաբում, այն ժամանակ ծնողներն ու ներկա յեղողները նրանց գովում են, հարկադրում պարել և այլն։ մեզ մոտ շատ հաճախ հասակավորները վոչ միայն տոներին, այլև ընդհանրապես, գինի չեն տալիս յերեխաներին ու յենթագրում, վոր այդ բոլորովին վատ բան չե։

Ապա, խոսենք անտիսեմիտիզմի մասին։ Կարծեք թե, այդ նույնպես ամենափոքր արձագանքը պիտի գտներ պիտիներների մեջ, բայց իրոք այն շատ տարածված է։ Յեա խսկույն կկարդամ մի նկատողություն։ Նա կոչվում է՝ «կորչի ազգային թշնամանքը»։ Ահա ինչ է դրում մի յերեխա։

«Ինչքան ցավալի յե լսել հաճախ կրկնվող բառերը։

— Ձեռքդ։

— Ո՛ք, թո՛ւրք։

Այս բոլորը մեր յերեխաները սովորաբար կրկնում են իրրև հայհոյանք, լսակ միթե մենք բոլորս միատեսակ չենք։ Ձե՞ վոր մենք գիտենք, վոր հին ցարական կառավարությունն եր մեկ ազգը մյուսի դեմ գրգռում, վորպեսզի ինքը խուսափի ժողովրդի դալրույթից։ Նա ասում եր. «բաժանիր և իշխիր»։

Մի ուրիշ որինակ տեսնում ենք մեկ խոր-

հրդալին տնտեսութեան մեջ, նրա կողքին սեղա-
վարված է մանկական աշխատանքալին մի գա-
ղութ, վոր կազմված է թաթար յերեխաներից:
Ինչ են գրում նրանք մեզ:

«Այդ խորհրդալին տնտեսութեան մեջ է
գտնվում նաև մեր պիտի երական ակումբը: Ըս-
կըզենեքում մեր յերեխաները շատ վատ ելին վե-
րաբերվում թաթար յերեխաներին, չեյին թող-
նում, վոր գյուղի միջով անցնեն, ամեն տեսակ
մականոններ ելին տալիս նրանց և վոչ մի կերպ
չեյին կարողանում նրանց հետ կառավարվել»:

Ապա, նկարագրվում է, թե ինչ միջոցներ
ձեռք առան յերեխաները, վորպեսզի վերացնեն
այդ յերեխութիւնները: Ընկերներ, կարելի չէ գա-
նազանագուշն փաստեր ու դեպքեր բերել յե-
րեխաների դրութեան մասին ընտանիքում, փո-
ղոցում: Ինչո՞ւ չեն տեղի ունենում այդպիսի
փաստեր: Հենց այն պատճառով, վոր մենք,
ինչպես հարկն է, չգիտենք այդ մասին և, ինչ-
պես հարկն է, չենք ազդում յերեխաների վրա:
Ահա այս մեր աշխատանքի մեծ, համարյա նոր
առաքելութիւնը մեզն է, վորովհետև մենք վո-
չինչ չենք արել մանկան աշխատանքի պաշտպա-
նութեան, մանուկների կյանքի ու արամադրու-
թյունների ուսումնասիրութեան վերաբերյալ:
Մանուկների պաշտպանութեան մասին խոսելով

չպետք է մոռանանք գյուղի վորքիկ բատրակ-
ներիս ու պետք է նրանց մեջ համապատասխան
աշխատանք կատարենք:

Այժմ տվելի մանրամասն ինքնագործունեյու-
թեան հարցի վերաբերյալ: Վորպեսզի ամբողջ
աշխատանքն ինքնագործունեյութեան վրա
հիմնեն, մեր կազմակերպութիւնները պետք է
այն անցկացնեն գործնական առաջադրութեան-
ների մեթոդով: Յե՛ս չեմ ուզում այդ մեթոդի
վրա շատ կանոն տունել, այդ հարցը քննվել է
անցյալ պիտիւնում: Հուշում ենք, վոր կոնֆերեն-
ցիայի պատգա մալորները բավականաչափ ծանոթ
են դրան: Հարկավոր է տաել, վոր բոլոր կազ-
մակերպութիւններն իրենց աշխատանքում չկա-
րողացան անցնել կոնկրետ առաջադրութեանե-
րի մեթոդին: Այս պատճառով մեր առաջ կանո-
նած է մասնապահան մասշտաբով աշխատանքի
այդ մեթոդին անցնելու խնդիրը: Այն կոլլեկ-
տիվներում, վորտեղ այդ մեթոդը կիրառվել է,
ամբողջովին արդարացրել է ինքն իրեն:

Ել ինչ ենք առաջադրում մենք ինքնագործ-
նեյութեանը վերաբերող հարցում: Նախ՝ մենք
կարծում ենք, վոր հարկավոր է վերջ տալ յե-
րեխաների մեջ կատարվող աշխատանքի կազմա-
կերպչական ձևերի նկատմամբ չոր ու ցամաք
վերաբերմունքին: Մեզ մոտ մինչև այժմ հաս-

տատվել ե ողակներով բաժանումը ել վնշ մի ձե
չկա. խմբակներ չի կարելի, միայն՝ ողակ: Յե-
թե չերկու կամ յերեք չերեխա ուզում են ըզ-
բաղվել ռադիոյով—չի կարելի, յեթե նրա՝ ք ու-
զում են շինել ռադիո-ընկալիչ—չի կարելի: Յե-
թե մեկն ուզում ե մի բանով զբաղվել, ապա
նրան ասում են—չի կարելի, պետք ե նստել
սեղանի մոտ ե հավաքականորեն, 10 մարդով
գիրք կարդալ, կամ դասախոսութիւն լսել, կամ
մի ուրիշ բան, բայց վոչ մի ազատութիւն չեն
տալիս յերեխայի նախաձեռնութիւնը ե ինքնա-
գործունեյութիւնը: Այս պատճառով մենք դնում
ենք այն հարցը, վոր յերեխաների մեջ կատար-
վող աշխատանքի մեր բոլոր կադմակերպչական
ձևերը, մեր սարուկտուրան պետք ե յերակեա
ունենան աշխատանքի շահերը: Մենք համարում
ենք, վոր ողակային սիստեմը, իբրև ալլալիսին,
ինքն իրեն ամբողջովին արդարացրեց, նա պետք
ե մնա, բայց պետք ե թույլատրել նաև խմբակ-
ները, պետք ե թույլատրել, վոր յերեխաները
յերկուսով, յերեքով, չորսով ու անհատապես աշ-
խատեն վորևե հարցի վրա, ընդվորում կադմա-
կերպող, գլխավորող, ուղղութիւն տվող գերը
վերապահելով ողակին:

Յերկրորդ հարցն այն ե, վոր մենք այժմ
հարցերը պետք ե վճռենք յերեխաների հետ

միասին ե վոչ թե յերեխաների փոխարեն: Սրա
համար մենք վորոշեցինք, վորպեսզի ամեն մի
ձեռք առնելիք միջոց, վորը հարավոր կհամարեր
կոմյերիտմիութեան բջիջը, առաջին հերթին թողնը-
վեր, վոր յերեխաները վճռեն: Մենք առաջ ենք
քաշում նաև այն հարցը, վոր մեզ մոտ կոլլ կ-
տիվի խորհուրդը մշտական նախագահ ունենա:
Աշկոմում նախագահ ունենք, ֆորպոստում նա-
խագահ ունենք, իսկ կոլլեկտիվում ունենք միայն
առաջնորդ, չկա յերեխաների ընտրյալը, մինչ-
դեռ մենք այդ տեսնում ենք դպրոցում, ֆոր-
պոստում ե այլն: Հարկավոր ե պարբերաբար,
ինչպես մեզ մոտ ընտրվում են ողակների ա-
ռաջնորդներ, ընտրել պիտեմքերից կոլլեկտիվի
խորհրդի նախագահ, վորը պետք ե առաջնորդի
աջ ձեռքը հանդիսանա կոլլեկտիվի ամբողջ աշ-
խատանքում:

Մենք մեծ նշանակութիւն ենք տալիս կադ-
մակերպութեան դեկավարութեան հարցին յերե-
խաների միջոցով: Մինչև այժմ մեր ամբողջ դե-
կավարութիւնն ընթանում եր անմիջականորեն
հենց առաջնորդի միջոցով, կոմյերիտմիութեան
բջիջի միջոցով: Մենք այժմ առաջ ենք քաշել,
իբրև սիստեմ, առնչական բյուրոների աշխա-
տանքը, ողակների առաջնորդների հավաքը,
պատի լրագրերի խմբագրերի խորհրդակցութիւ-
նը ե այլն:

Մենք առաջ ենք բաշտում հուշնապետ աշխարհ-
քը, վոր մեզ մոտ տեղի ունեցող զանազան ու-
յոնական միջոցառութիւնները, կոնկուրաների
ու ցուցահանդեսների մեջ և այլն հարկավոր ե
զրավել հենց պիտներններին: Մենք առաջարկում
ենք պիտներնների բոլորոյին կից գործող հանձ-
նաժողովի մեջ մտցնել մեր պիտներ-կոմիտիտա-
կաններին: Այս գործում մենք նշում ենք մի
ամբողջ շարք գործնական միջոցառութիւններ:
Մենք կարծում ենք, վոր այս հանդիսանում ե
պրակտիկ մեծ գործ, մենք կարծում ենք, վոր
մեր հրահանգները պետք ե տրվեն նաև չեղե-
խաներին ուղղված բաց նամակներում:

Այժմ առաջնորդի մասին: Առաջինը, վոր
հարկավոր ե անել, այդ այն ե, վոր անհրաժեշտ
ե դադարեցնել անճոռնի վերաբերմունքը, ծաղ-
րանքները դեպի առաջնորդը: Այդ՝ ընկերներին
յետ ե մղում աշխատանքից: Այն անուշադրու-
թիւնը, այն արհամարհանքը վորոնցով շատ հա-
ճախ շրջապատված են կոլլեկտիվների առաջ-
նորդները, հարկավոր ե վոչնչացնել: Յերկրորդ՝
հարկավոր ե, վոր առաջնորդը դադարի հանրա-
գետ լինելուց: Իսկապես, իրոք նա չերեք հան-
րագետ չե յեղել, բաց մենք նրա առաջ շարու-
նակ աշխատի խնդիրներ ելինք դնում, վոր նա
պետք ե կարողանա հասարակական աշխատանք

կատարել, զբույցներ կազմել, աշխատանքային
արհեստանոցներ կազմակերպել, ռադիոյի, ավի-
ոյի մասնագետ լինել և այլն, - այն բոլոր զա-
նազանագույն խնդիրները մասնագետ վորոնք
առաջադրված են կազմակերպութեանը: Այժմ
այն հարցն ե առաջ դալիս, վոր սռաջնորդը
գործնական աշխատանքում պետք ե շրջապատ-
վի մի ամբողջ շարք անկուսակցականներով ու
կոմիտիտականներով՝ փականագործներով, կազ-
մարարներով, հշուաններով և այլն, վորոնք կող-
նեն նրան կազմակերպել արհեստանոցը, կարգի
դցել աշխատանքը, պետք ե աշխատանքի մեջ
զրավել նաև բանվորուհի մօրը, վորը առաջնորդին
կողմի կարի խմբակ կազմակերպել, հարմոնիստին,
վորը կաշիսուժացնի, ավելի գունեղ կը դարձնի
կոլլեկտիվի հավաքները:

Այդ մարդիկ կարող են շատ ողնել գործ-
նական աշխատանքում: Յես ժամանակ չունիմ,
յեթե վոչ կարող եյի կարդալ մի ամբողջ շարք
փաստեր Դնեպրոպետրովսկի, Մոսկվայի ու Լե-
նինգրադի կազմակերպութիւններին, յերբ պիտ-
ներներն այս հարցը դնում ելին բանվորուհի-
ների պատգամավորական ժողովներում և բան-
վորուհիները նրանց ձրի տալիս ելին խմբակ-
ների դեկավարներ: Յերբ նրանք այս հարցը
զրեցին գործարկումի առաջ, Դնեպրոպետրովսկի

կազմատան վարպետի առաջ, նա վոչմիայն տրվեց նրանց մի ամբողջ շարք դեն գցելու նյութեր, վոր պետքական ելին այդ գործի համար, ալի սկսեց ձրի դեկավարել կազմարարական խմբակը: Յես կարող եմ բերել մի ամբողջ շարք փաստեր, վորոնք ասում են, թե շատ կոմմունիստներ կուզենային աշխատել չերեխաների հետ: Նրանք ասում են: «Մենք չենք կարող ամբողջ որն աշխատել կոլեկտիվում, բայց մենք սիրում եմ յերեխաներին: Մենք կը համաձայնեյինք աշխատել: Տվեք մեզ շարաթական յերկու ժամ, և մենք մեծ ուրախությամբ կը պարապենք չերեխաների հետ, ուրախությամբ կը պատմենք չերեխաներին չինական անցքերի մասին և այլն»: Յեթե առաջնորդը շրջապատվեր զանազան ուժերով, վորոնք ոգնեյին նրան գործնական աշխատանքում, այն ժամանակ նա հանդես կը գար միայն գլխավոր կազմակերպչի դերում և անպալման գլուխ կը հաներ ամբողջ աշխատանքից:

Յերրորդը, վոր մեզ հարկավոր է, այդ առաջնորդին իր աշխատանքում գործնական ոգնություն ցույց տալն է:

Այստեղից անցնում եմ վերջին հարցին, դեկավարության հարցին: Ընկերներ, մեր դեկավարությունը պետք է ընթանա, գլխավորա-

պես, առաջնորդին իր աշխատանքում ոգնելու գծով: Ի՞նչ է նշանակում այս: Գործնական ոգնությունն այն կը լինի, վորպեսզի, ինչպես չես ձեզ ցույց տվեցի, սերմեր ու գործնական ցումներ ուղարկենք գյուղական կոլեկտիվներին: Այդ նշանակում է՝ հրատարակել վործին վերաբերող մի գրքուկ, վորի մեջ պատմվում է, թե ինչպես այս կամ այն կոլեկտիվն այս կամ այն վործն արեց, մի գրքուկ, վորի ընթերցումից հետո առաջնորդը կարողանա ինքն էլ այդ աշխատանքն սկսել: Այդպիսի գրքեր հրատարակելու վործ կա: Այժմ մենք ինքներս ենք վրձուել ամառը մի ընդհանուր նամակ ուղարկել և յերկու զիրք հրատարակել, մեկը քաղաքի, միուսը գյուղի համար և նրանցում շարադրել կոլեկտիվի գործնական աշխատանքի բոլոր նյութերը: Բացի սրանից, բացի այս գրքուկների հրատարակութունից և զանազան տեսակ գործնական նյութեր ուղարկելուց, մեր պիոներների բյուրոների առաջ կանգնած է նույնպես հետազոտական աշխատանքի խնդիրը: Յեթե առաջնորդին ոգնելու գործի մեջ պետք է գրավել զանազանագույն մարդկանց, վոչ միայն մանկավարժներին ու ագրոնոմներին, վորոնց մասին չես խոսեցի, ապա նրանցից ամենատաղանդավորներին, ամենաչեռանդուններին և ամենա-

ձեռներեցներին պետք է դրավել պիտներների բյուրոներին գործնական աշխատանքի մեջ:

Այժմ կոմյերիտմիությունը պետք է պայքարի ժողովրդական լուսավորության բաժինների գծով հանուն արտագլոբալական բաժինների, վորոնք պիտի բացվեն սոցիալականների կից: Յեթե մտաբերեք այն, ինչ չես առացի աշխատանքի բովանդակության վերաբերմամբ, կինոյի, թատրոնի, ցերեկույթների, խմբակների, կենդանի լրագրերի վերաբերմամբ, աշխատանքի ու լեռնեխանների իրավունքների պաշտպանության վերաբերմամբ և այլն, դուք կը տեսնեք, վոր այս մի ամբողջ շարք միջոցառություններ են, վորոնք պետք է ընթանան արտագլոբալական աշխատանքի գծով, վորոնց համար բավական չեն մեկ կոմյերիտականի վոչ միջոցները, վոչ էլ ուժերը: Մենք այդ աշխատանքում պետք է լինենք նախաձեռնողներ ու նախամարտիկներ ճիշտ աչպես, ինչպես ֆաբրիկա-գործարանային աշակերտների դպրոցներում, կոմյերիտական դպրոցներում և այլն: Մենք աչտեղ պետք է դնենք մեր մարդկանց, վոր, ինչպես հարկն է, կազմակերպեն աշխատանքը:

Ընկերներ, իսկ վորն է հիմնական առփոփումը: Հիմնական առփոփումը հետևյալն է: Յեղևելով այն բանից, վոր կոլլեկտիվն իր ամբողջ

պրակտիկ գործունեություն մեջ պետք է բավարարե յերեխաների աճած պահանջները, հարկավոր է, մենք մեր աշխատանքի հին գծերը պահելով—ազատ ժամեր, դպրոց, կազդուրում, աշխատանք, հասարակական աշխատանք և յերեխաների պաշտպանություն—անկյունաքար պահելով աշխատանքը, դպրոցը և հասարակական աշխատանքը, դենք վոչ միայն այն հարցը, թե վորտեղ անել, այլեվ ինչ ու ինչպես անել, դենք աշխատանքի մեթոդի, յերեխաների ինքնագործունեության, հետաքրքրական, կենդանի ձևերի հարցը, վորոնք պետք է համապատասխանեն այն յերեք հիմնական պայմաններին, վորոնց մասին չես ավելի առաջ խոսել եմ:

Այսպես ուրեմն, մեր կազմակերպությունը պետք է լինի վոչ թե կազմակերպություն յերեխաների համար, ինչպես այժմ այդ նկատվում է վորոշ տեղերում, այլ պետք է դառնա յերեխաների իրենց մասնատան քաղաքական կազմակերպությունը:

Ահա այն միջոցառությունները, վորոնք, յեթե ճիշտ կիրառվեն, կապահովեն ծանր դրությունից յեղևելը: Մենք պետք է խորհենք և ուղարկություն դարձնենք այն բանի վրա, վոր մենք, կոմյերիտականներս մեր գործական աշխատանքում շատ հաճախ մեր ուժերը ցրելով ենք տալիս, չենք կա-

յերեխաների աճած պահանջներին՝ կուլտուրական-աշխատանքային և հասարական դաստիարակութեան ամբողջ աշխատանքի աշխուժացման ու չեղեխաների ազատ ժամերը կարգավորելու միջոցով, և գտնվեն աշխատանքի ավելի մասսայական գունեղ ձևեր, կառուցված հենց յերեխաների լայն ինքնագործունեություն և նախաձեռնություն հիմքի վրա՝ առաջնորդների ընտրանքի, նախապատրաստություն և շարժման ղեկավարություն ամբողջ սիստեմի լավացման միջոցով:

ԱՇԽԱՏԱՆԻՔԻ ԱՇԽԱՌԻԺԱՅՈՒՄ ՅԵՎ ԻՆԴՆԱ-ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԶՈՐԳԱՅՈՒՄ

3. Անհրաժեշտ է պիտաներական աշխատանքի բովանդակությունը հասարակական բնույթ տալ, հետևելով աշխատանքի դաստիարակչական արդյունքին, կապելով այն ֆաբրիկայի, գործարանի, գյուղատնտեսության, կուսակցության ու կոմյերիտմիության հետ և վճռականապես պաշարելով քաղաքական մերկ ֆրոնտի և չեղեխաներին մեխանիկորեն զանազան հասարակական կազմակերպությունների աշխատանքի մեջ գրավելու դեմ: Պիտաներների հասարակական աշխատանքում կարևորագույն դեր պետք է խաղաղ կազմակերպված չեղեխանների մեջ աշխատելը:

4. Կոնֆերենցիան ուշադրություն է դարձնում այն բանի վրա, վոր աճհրաժեշտ է աշխատանքային ունակությունների ու գիտելիքների տարածումը, զլխավորապես երեքարականության, ռադիոյի, ավիոյի վերաբերյալ, ամեն կերպ զարգացնելով չեղեխանների տեխնիկական նախաձեռնությունը և գյուտարարությունը: Անհրաժեշտ է նույնպես լայնորեն արմատացնել պիտաներների միջավայրում կարուձևի, հյուսելու ասեղնագործելու և այլն պարզագույն ունակությունները: Ամեն մի պիտաների, կամ 2—3 հոգուց կազմված խմբակի, պետք է հնարավորություն տրվի զբաղվել տեխնիկայի ճյուղերից՝ իրենց հետաքրքրող վորևէ մոմենտով, այդ աշխատանքը կատարելով ողակի կազմակերպող ազդեցությունը: Հարկավոր է ամեն կերպ խրախուսել տանը տեխնիկական անկյուններ ստեղծելը և ակումբներին ու կոլլեկտիվներին կից զանազան տեխնիկական խմբակներ ու արհեստածոցներ կազմակերպելը:

5. Կոլլեկտիվի գյուղատնտեսական աշխատանքը կապելով տվյալ ռայոնի կոմյերտմիության պրակտիկ գյուղատնտեսական աշխատանքի հետ, անհրաժեշտ է այն կատարել ինչպես անհատականորեն, այնպես էլ հավաքականորեն, այդ աշխատանքի մեջ գրավելով անկազմակերպ չեղեխաններին: Այս կամ այն

տեսակ գյուղատնտեսական աշխատանքի նշված կոնկրետ գործը հարկավոր ե մինչև վերջ հասցնել: Պիոներները պետք է ձգտեն սառցած փորձը փոխադրել իրենց ընտանիքը և մյուս գյուղացիների ընտանիքները:

6. Ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում աշխատանքային դաստիարակության վերաբերող աշխատանքում հիմնականն այն չէ, վոր վորոշ արհեստ սովորեցնենք, այլ այն, վոր ուղիղ վերաբերմունք մշակենք դեպի աշխատանքը (աշխատել կարողանալ, աշխատանքը սիրել, հասարակական աշխատանքը հարգել և այլն):

7. Յերեխաների ազատ ժամերը կարգավորելու համար հարկավոր ե բոլոր հավաքույթներում ժամանակի մի մասը թողնել պիոներների սիրած ազատ զբաղմունքների համար (շաշկա, շախմատ, նկարչություն և այլն): Լայն տարածում պիտի ստանան մասսայական տոները, կենդանի լրագրերը, կինո-յերեկույթները, գրամատիկական աշխատանքը, ձկնորսների, յերաժիշտների, գավառագետների, նկարել սիրողների խմբակները և այլն: Անհրաժեշտ ե ամեն կերպ խրախուսել շախմատի և այլ տուրնիրները, լավագույն նկարի համար կազմակերպած կոնկուրսները, սպորտի մրցությունները: Անհրաժեշտ ե ազատ ժամերին առողջացման ու կարգավորման

վերաբերող աշխատանքն ոգտադրծել նաև պիոներների ու յերեխաների մեջ ռազմական պրոպագանդ անելու համար (կարճատև յերթեր, ռազմա-սպորտային խաղեր, հրաձգային սպորտ, պարսպուռնքներ տպարանում, առաջին ոգնության ասպարիզում):

8. Հարկավոր ե ընդայնել պիոներական-կազմակերպության մասնակցությունն անխտ-մության ու հսկողության բացակայության դեմ մղվող պայքարին, հատուկ ուշադրություն դարձնելով այն յերեխաների մեջ կատարվող աշխատանքի վրա, վսրոնք հանձնված են գյուղացիների ընտանիքներին (պատրոնատ). նույնպես և կովել յերեխաներին ծեծելու, նրանց հետ կռուտ վարվելու դեմ:

9. Պիոներներին ու յերեխաներին առողջացնելու նպատակով, հարկավոր ե պիոներական կազմակերպության աշխատանքի մի մասը բաց ողում կատարել, վորի համար ամենից առաջ անհրաժեշտ ե ամառային ու ձմեռային հրապարակներ լայն տարածում, ամառային լողարանների, ժասսաճական զբոսանքների, եքսկուրսիաների, առավոտյան մարմնամարզական պարսպունքների կազմակերպում և այլն: Ծամբարները մունքների կազմակերպում և այլն: Ծամբարները պետք ե միտն առողջացման, մասսայական ձևեր, պետք ե միտն առողջացման, մասսայական ձևեր, վորի կողքին անհրաժեշտ ե պաշտպանել տեղերի

նախաձեռնութիւնը սանիտարական ախպի ճամբարներ ստեղծելու գործում: Գլուղերում հատուկ ուշադրութիւն դարձնել սանիտարական առողջապահական ունակութիւնների արմատացման վրա, այստեղ եւ զարգացնելով յերեխաների առողջացման աշխատանքը (հրապարակներ, երսկուրսիաներ, զբոսանքներ):

10. Կոնֆերենցիան մեծ նշանակութիւն է տալիս հաստատուած որեւքների ու սովորութիւնների պահպանմանը պիւններների կողմից: Վերջերս հաճախակի լին դարձել նրանց խախտման դեպքերը, ինչին հաճախ նպաստում է նրանց նկատմամբ կողեկտիվի առաջնորդի անուշադիր ու արհամարհական վերաբերմունքը: Հաստատուած որեւքները և սովորութիւններն իրենց միջավայրում ամուր պահելով, պիոներները պետք է անձնական որինակով աչն տարածեն անկազմակերպ յերեխաների մեջ:

11. Կոնֆերենցիան հատկապէս նշում է, վոր դժվարութիւններից դուրս գալը, պիոներական աշխատանքի աշխուժացումը, վառ, գունեղ ձևերի արմատացումը հնարավոր են միայն պիոներների ինքն սկործանելութիւն ամենալայն զարգացման պայմանում: Այս նպատակի համար առհրաժէշտ է. ա) աշխատանքը կատարել պիոներների ու յերեխաների հոժարակամ մասնակցու-

թիւն սկզբունքներով. բ) աշխատանքի ձևերը հարմարեցնել բովանդակութիւնը (չվախենալ խմբակներ կազմելուց, աշխատանքն անհատապէս և խմբակներով կատարելուց, ապահովելով սակաչն ողակների ու կոլեկտիվների նախաձեռնող դերը. գ) աշխատանքը կատարելով կոնկրետ առաջադրութիւնների մեթոդով, բոլոր հարցերը վճու՛լ վո՛չ թե յերեխաների փոխարեն, այլ յերեխաների հետ միասին (ողակի, կոլեկտիվի խորհրդի, կոլեկտիվի) Պիոներներն իրենք պետք է նշեն, կազմակերպեն և հաշվառեն իրենց աշխատանքը. դ) ամրացնել կոլեկտիվի լարհրդի ընտրովի նախագահին վո՛չ միայն իբրեւ խորհրդի նիստերում նախագահողի, այլև իբրեւ կոլեկտիվի առաջնորդի իսկական ոգնականի, վոր տղաներից ընտրված է վորոշ ժամկետով, ե) ամբողջ աշխատանքը հարմարեցնել յերեխաների զանազան հասակներին, — մեծ յերեխաների մեջ աշխատանքը պետք է ավելի խոր բնույթ կրի և ավելի մտտիկ կապված համակոմյերիտական աշխատանքի հետ

Պիոներներին իրենց կազմակերպութիւնը ղեկավարելու մեջ գրավելու համար անհրաժէշտ է. ա) ամեն մի գործնական հրահանգ անցկացնել պիոներական ակտիվի միջոցով, սիւտեմ դարձնելով ողակների առաջնորդների, պա-

ղեկավարութեան կոնկրետութեանն ու ժեղացնելու վորոշ միտում, կոնֆերենցիան կարծում է, վոր այնուամենայնիվ լոմֆերիտութեան ղեկավարութունը դեռ բավական չէ։ Անհրաժեշտ է հասնել վճռական բեկումի պիտեբական-շարժման ղեկավարութեան ու ժեղացման և լավացման ուղղութեամբ, այն ավելի կենդանի ու կոնկրետ դարձնելով։ Բոլոր հրահանգները պետք է չեղնեն տեղական փորձի հաշվառումից, լինեն կարճ ու պարունակեա իրենց մեջ վոչ միայն մատնանշում, թէ ինչ անել, այլև ինչպե՞ս անել։ Կոնկուրսները, ցուցահանգեսները, աշխատանքի առանձին ճշդերի քննութիւնը պետք է լայն տարածում գտնեն։ Սոցորագուն կետերում անհրաժեշտ է տեխնիկական ու գյուղատնտեսական կայանների կազմակերպում։ Անհրաժեշտ է կազմակերպութեան ղեկավարութիւնը մոտեցնել հենց պիտեբներին և հատկապէս պիտեբական ակտիվին (հանձնաժողովներին, խորհրդակցութիւններին հետադուրութիւններին աշխատանքը)։ Շարժման առանձին հարցերի մշակման համար (աշխատանքային քրժունեցութեան ծրագիր, ղեղատնտեսական աշխատանք և այլն) պետք է դրավել դասական կազմակերպութիւնների մասնագետների ու ծնողների (լուսրժին, տորաժին, հողբաժին, կինբաժին, մանկավարժ, ագրոնոմ,

բժիշկ, արհեստանոցի ղեկավար և այլն)։ Հարկավոր է հատուկ ուշադրութիւն դարձնել կազմակերպութեան ղեկավարութեան վրա մամուլի գծով (թերթեր, ժոժնալներ, ղեկավար գրախոսութիւն վոչ միայն առաջնորդներին, այլև պիտեբական ակտիվի համար) և մանկական գրքի ստեղծման վրա ազգային ծայրամասերում և ազգային կազմակերպութիւններում։ Անհրաժեշտ է լավացնել ԿԿ. ղեկավարութիւնն ազգային կազմակերպութիւնների աշխատանքի վերաբերմամբ և ուժեղացնել պիտեբներին բոժրոնների աշխատանքը տեղերում ազգային փոքրամասնութիւնների կողմէկաիվներում։

14. Կոնֆերենցիան առաջարկում է տեղական բոլոր կազմակերպութիւններին կատարել ԿԿ. հրահանգ աշխատանքում ոգնելու, առողջութեան մասին հոգալու, առաջնորդների զործը թեթեացնելու վերաբերյալ, ուշադրութիւն դարձնելով նրանց նախապատրաստութեան վրա, ամենից առաջ դեպի չերեխաներն ու աշխատանքն ուղիղ մոտեցում ունենալու գծով։

Առաջնորդը պետք է «հրամանատար» կամ «դայակ» չլինի, վոր հրամայում է կամ ամեն ինչ անում յերեխաների փոխարեն, այլ ավագ ընկեր, հենց պիտեբների զործունեցութեան հմուտ կազմակերպող։

կազմակերպության կարեւորագույն հերթական խնդիրներէց մեկն է հանդիսանալ բանվորներին ու գյուղացիներին միջավայրից իսկապես լավագույն, ակտիվ կոմյերիտականների և՛ քաղաքական և՛ ընդհանուր կրթական տեսակետից ամենից տվելի գրագետների ընտրանքը պիտո՞ւն-բախան-կողեկաիփների ղեկավարության և պատանի-պիտներնեի բնութոնների նախագահների կազմը լավացնելու համար: Ազգային կազմակերպութուններում պետք է ձգտել այն բանին, վոր կ'լլեկաիփի առաջնորդները ընտրվեն բնիկ ազգության կոմյերիտմիության միջավայրից:

15. Կոնֆերենցիան հանձնարարում է կկ. վոր վճռականորեն դնի լուսժողկոմաի ու ՀԱՄԿԽ առաջ մանկական ակումբներին շինարարության, մանկական կինո-ֆիլմաների, մանկական կինոթատրոններին ստեղծման, հրապարակների կառուցման, յերեխաների մեջ եքսկուրսիոն զործի դարգացման, բանվորական ակումբներում ու խրճիթ-ընթերցարաններում հատուկ մանկական որերի կազմակերպման, մանկական պիեսների, յերգերի ստեղծման, մանկական թատրոնների լավացման և զարգացման հ-րցը:

Կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում, վոր լուսբաժնին կից կազմակերպվի յերեխաների մեջ աշխատելու արտադպրոցական բաժին: Ման-

կական արտադպրոցական աշխատողներ նախապատրաստելու նպատակով անհրաժեշտ է կոմ-մունիստական Դաստիարակության Ակադեմիային կից ստեղծել մանկական արտադպրոցական ֆակուլտետ և կուրսերի ցանցը ծավալել տեղերում:

16. Նշելով վոր պիտ. երական-կազմակերպութունների մեջ կան նշանակալի քանակությամբ մեծահասակ յերեխաներ, կոնֆերենցիան հանձնարարում է կկ այս հարցի մանրամասն ուսումնասիրության հիման վրա մշակել մեծահասակների հետ աշխատելու գործնական միջոցառութուններ, կազմակերպելով նրանց պլանաչափ անցումը կոմյերիտմիության մեջ, պատանեկական սեկցիաների կազմավոր ընկերութունների մեջ աշխատելու համար և այլն:

17. Վերջերս նկատվող հեռացումները դրսում են վոր թե աճման մեխանիկական զրսպման հարցը, ալ աշխատանքի բովանդակության հարմարեցումը յերեխաների պահանջներին ու հեռաքրքրություններին: Միայն այս խնդրի լուծումով կարելի չէ ստեղծել կազմակերպության հեռագա աճման պայմաններ, շարժման հոսանու-տության կրճատում և նորմալ զարգացում:

18 Կոնֆերենցիան հաստատում է, վոր բացակայում է կոմյերիտմիության ու կոլլեկ-

տիվների ղեկավարութունը հոկտեմբերիկների
վերաբերմամբ, պակասում և աշխատանքի բու-
վանդակության պարզութիւնը, բացակայում
են նախապատրաստված ղեկավարները: Նշելով
այդ շարժման կարևորութիւնը, կոնֆերենցիան
հանձնարարում և համ.ԼԿՅՆՄ ԿԿ, տեղական
կոմիտեներին ու բժիշներին ղեկավարել այդ հարցի
ուսումնասիրությամբ ու զարգացմամբ՝ նրա ղե-
կավարության համար առաջ քաշելով տվելի նա-
խապատրաստված ղեկավարներ:

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Գաբրիելյան Ռ. — Միջատակեր բույսեր . . . 20 կ.
2. Լեբեգեվ Ի. Ա. — Խնչպես և տառաջացել չեր-
կիրը 30 կ.
3. Գաբրիելյան Ռ. — Ովկիանի թագավորը . . . 15 կ.
4. Յելաչիչ Յեվ. — Կենդանի և բուսական աշ-
խարհների փոխհարաբերու-
թյան մասին 25 կ.
5. Սարգսյան Ն. — Զարմանալի դեմքեր 35 կ.
6. Գաբրիելյան Ռ. — Ճագարամուկը,
Բզեզների լեակից 25 կ.
7. Սարգսյան Ն. — Կենդանի ճրագներ 25 կ.
8. Նանսեն Փրիսլով. — Գիշերվա խավերի և սա-
ռույցների մեջ | հտ. 60 կ.
9. Գաբրիելյան. — Մողեսների աշխարհում . . . 25 կ.
10. Կարինցեվ Ն. — Ելեքարիֆիկացիայի պիոներ
եղիսունը 15 կ.
11. Նանսեն Փ. — Գիշերվա խավարի և սառույց-
ների մեջ հտ. ր. 60 կ.
12. Նեյաչեվ. — Ստորերկրյա ուժեր

Դիմել Պետհրաքի բոլոր գրախանութներին
յեվ բաժանմունքներին



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

<< Ազգային գրադարան



NL0185054

